ների միջոցով հանդես գա հայերի պաշտպանությամբ, ապա շահը կարող է սաստել նրանց և թույլ չտալ, որպեսզի ճնշեն հայերին։ Նամակի բովանդակությունից միաժամանակ երևում է, որ նրա հեղինակին (ավելի ճիշտ՝ հեղինակներին) հուզող հիմնական հարցը ժողովրդին սպառնացող ասիմիլյացիայի և ձուլման վտանգն էր, կամ ինչպես ասված է նամակում, «մեծ կորստյան» վտանգը։ Եվ իրոք, հայ աշխատավոր ժողովուրդը կարողանում էր նյութական ծանր զոհողությունների գնով հատուցել օրինական բոլոր հարկերն ու տուրքերը և այդպիսով պահպանել իր ազգային տրադիցիաները։ Մինչդեռ, ինչպես մենք տեսանք, միայն արտակարգ օրենսդրական միջոցառումների, տնտեսական ապօրինի ճնշումների, կամ ինչպես ընդունված էր ասել, «շլթաղի» (شلتاق) միջոցով էր, որ իրանական ասիմիլյատորները փորձում էին կյանքում իրագործել հայերի բռնի ասիմիլյացիայի քաղաքականությունը։

Փաստեր կան ենթադրելու, որ այս գիտումը անհետևանք չի մնացել, որովհետև, երբ 1674 թվականին Հակոբ Ջուղայեցուն հաջողվում է գաղտագողի փախչել դեպի Սպահան, Սաֆիկուլի խանը մի ընդարձակ ամբաստանագիր է ուղարկում շահ Սուլեյմանին, զրպարտելով կաթողիկոսին։ Խանի այս նամակը ստացվում է նախքան Հակոբ կաթողիկոսի Սպահան հասնելը։ Սակայն շահը այդ գրությունը դեռ լրիվ չընթերցած, տեղն ու տեղը պատռում է այն, այրում իր մոտ դրված կրակարանի վրա և զայրացած գոչում. «Սաֆի Ղուլի խանն քակէ զերկիրն, և ինքն զիւր վնասն դնէ ի վերայ սեագլխոց»[1]։ Պետք է ենթադրել, որ շահը, նրա հետ միասին նաև էթեմադ ուդ-դովլեն, արդեն ենթարկվել էին որոշ հարցապնդման Մոսկովյան դեսպանների կողմից։ Մասամբ դրանով պետք է բացատրել և այն, որ Հակոբ կաթողիկոսը շատ սիրալիր ընդունելություն է գտնում արքունիքում և մեկ տարի հետո, 1675 թվականին նոր խանի՝ Թավրիզի Ռուստամ խանի որդի Սաֆիկուլի խանի հետ վերադառնում է Երևան, իսկ նախկին Սաֆիկուլի խանը ձերբակալվում է և զրկվում իր ամբողջ կարողությունից

Սակայն ֆեոդալական այնպիսի մի երկրում, ինչպիսին Սեֆյան Իրանն էր, որտեղ յուրաքանչյուր խան ինքն իրեն համարում էր տվյալ նահանգի լիիրավ տերն ու տնօրենը, որի առանձին նահանգներում կենտրոնական իշխանության ստվերն անգամ չէր երևում, նման արտաքին դիվանագիտական միջամտությունները չէին կարող որևէ ազդեցություն գործել և կանխել այն բոլոր չարիքները, որոնք բխում էին պետական-հասարակական ամբողջ սիստեմից։

Այս երկրորդ Սաֆիկուլի խանը ոչ միայն վերջ չտվեց կրոնական հալածանքներին, այլ նորահնար արգելքներով գերազանցեց իր նախորդին։ Նա ձեռնարկեց մի շարք ուժեղ ռեպերսիաների՝ ուղղված Երևանի բեգլարբեգության մեջ ընակվող հայ ազգաբնակչության դեմ։ Այս խստական և անհանդուրժողական քաղաքականությանը Երևանի ազգբեջանական համայնքը պատասխանեց միահամուռ ապստամբությամբ, որը հայ-ազգբեջանական դարավոր բարեկամության և եղբայրության պայծառ էջերից մեկն է կազմում։

---

[1] Զաքարիա Սարկավագ, հատոր 2, էջ 80։